

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը հանդիպեց Չինաստանից և Մինգապուրից ժամանած հյուրերի հետ

07.04.2018



Այսօր ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը հանդիպեց Վայոց ձորի մարզում իրականացվող „Որդեգրի մի գյուղ, նախաձեռնության շրջանակներում Չինաստանից և Մինգապուրից Վայոց ձոր ժամանած աջակիցների և հյուրերի հետ:

Մարզի ղեկավարը ողջունեց հյուրերին և շնորհակալության հայտնեց աջակցության համար: Հակիճ ներկայացնելով Վայոց ձորի մարզը, նրա պատմությունը, մշակութային, գյուղատնտեսական և մարզի տնտեսության մյուս ճյուղերը, Հարություն Սարգսյանը նշեց, որ այստեղ առկա են զբոսաշրջության տարբեր ճյուղերի զարգացման բազմաթիվ հնարավորություններ՝ գյուղատնտեսական, էկո, արկածային և այլ ուղղություններ: „Համեմատելով նախորդ տարիների հետ, պետք է նշեմ, որ զբոսաշրջիկների հոսքը Վայոց ձորի մարզ մեծացել է>>,-նշեց Հ. Սարգսյանը:

Տիկին Ժենգ, ով ներկայացնում է Չինաստանի Հանրապետության 2000-ից ավելի զբոսաշրջային գործակալություններ, նշեց, որ չին զբոսաշրջիկների հոսքը դեպի Վայոց ձոր ակտիվացնելու համար նպատակահարմար է կազմակերպել Չինաստանի զբոսաշրջային տարբեր գործակալությունների ներկայացուցիչների այցը Վայոց ձորի մարզ, որոնք կուսումնասիրեն մարզի ներուժը և հնարավորությունները, ինչը հնարավորություն կտա Վայոց ձորի մարզի տեսարժան և պատմամշակութային վայրերն ընդգրկել զբոսաշրջային տարբեր փաթեթներում: Տիկին Ժենգն առաջարկեց նաև չինական, հնդկական և այլ երկրների բուժական և առողջության կենտրոնների մասնագետների հրավիրել Վայոց ձորի մարզ՝ իրենց ծառայությունները տրամադրելու և մարզում աշխատելու համար:

Մինգապուրից ժամանած Սեմյուն Սեուն, ով հանդիսանում է „Որդեգրի մի գյուղ, նախաձեռնության աջակիցներից մեկը, նշեց, որ Վայոց ձորի մարզը սինգապուրցի զբոսաշրջիկների համար հիանալի վայր է հանգիստն անցկացնելու համար: Նա նշեց, որ պատրաստ է համատեղ ծրագրեր իրականացնելու հարցում:

Մարզի ղեկավարը պատրաստակամություն հայտնեց աջակցել և օգնել իրականացնելու յուրաքանչյուր գաղափար և նախաձեռնություն:

„Մեզանից յուրաքանչյուրն իր ազգին բնորոշ և շատ տարբեր հատկանիշներ ունենք, բայց միևնույն ժամանակ մենք շատ նման ենք՝ պատրաստ համագործակցության ուղղված մեր երկրների և մեր մարզերի զարգացմանն ու առաջընթացին>>,-իր խոսքը եզրափակեց Հարություն Սարգսյանը: